

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 27 Յոկտեմբերի, 2008

Թուրքիայի հանրապետութեան հիմնադրման տարեդարձի առթիւ Լոս Անջելոսի Յայ Երիտասարդաց Դաշնակցութիւնը հանդէս է եկել պահանջատիրութեամբ: ՅԵԴ-ի աւելի քան 50 անդամներ Շաբաթ, Յոկտեմբերի 25-ի երեկոյեան բողոքի ցոյց են կատարել Լոս Անջելոսին մերձակայ Լոնգ Բիչ քաղաքի Յիլթոն Յիւրանոցի առջեւ, ուր տեղի էր ունենում Թուրքիայի հանրապետութեան հիմնադրութեան տարեդարձը եւ դրա հիմնադիրը համարուող Սուստաֆա Քամալ Աթաթուրքի պատուին կազմակերպուած ճաշկերոյթ-հաւաքը: «Այս միջոցառումը միտում էր նշել այնպիսի հանրապետութեան հիմնադրութիւնը, որը ստեղծուել է Յայոց Ցեղասպանութեան մէկ ու կէս միլիոն հայ նահատակների աճիւնների վրայ, մի իրողութիւն, որը չենք կարծում արժանի լինի որեւէ մեծարման», - յայտարարել է ցուցարարների ղեկավարներից Վաչէ Թովմասեանը: Չորս ժամ տեւած բողոքի ցոյցի ընթացքում հիւրանոցի մուտքի առջեւ համախմբուած հայ երիտասարդները բացականչել են Թուրքիայում մարդու իրաւունքների ոտնահարումը դատապարտող կարգախօսներ, մինչ ՅԵԴ-ի այլ անդամներ հիւրանոցի ներսում լռակեաց ցոյց են կատարել, կրելով յատուկ շապիկներ, որոնց վրայ ներկայացւում էին Թուրքիայի արիւնշաղախ դրօշը եւ «անմարդկայնութեան հանրապետութիւն» գրութիւնը: Երկու ցուցարարներ եւս, ներս մտնելով ճաշկերոյթի հանդիսասարահը բացականչել են «Ճանաչէ՛ք Յայոց Ցեղասպանութիւնը» կարգախօսը, ճիշտ այն պահին, երբ սրահի ներկաները ոտքի էին կանգնել քուրդ անջատողականների կողմից սպանուած թուրքերի յիշատակը յարգելու համար: Սիւստաֆանակ, հիւրանոցի շէնքի առջեւ կանգնած ՅԵԴ-ի անդամներից Արեգ Սանթիկեանը ծեռքի բաժրախօսով ի լուր հանդիսականների յայտարարել է, թէ. «1923 թուականի Յոկտեմբերի 29-ին թուրքական հանրապետութիւնը կազմուեց եւ ճանաչուեց որպէս Օսմանեան կայսրութեանը յաջորդող պետութիւն: Այդ հանրապետութիւնը շարունակուել է վարել Օսմանեան կայսրութեան բռնադատական ու ջարդարարական քաղաքականութիւնը, ճնշում է ազգային փոքրամասնութիւններին, արգելում է խօսքի ազատութիւնը եւ մերժում է Յայոց Ցեղասպանութիւնը»: ՅԵԴ-ի ցոյցը լայն արձագանքն է ստացել հիւրանոցում գտնուող այլ այցելուների մօտ, ովքեր համակրական արտայայտութիւններ են կատարել ցուցարարների եւ Յայոց Ցեղասպանութեան ճանաչման նկատմամբ: «Թուրքիայի կողմից կատարուող մարդու իրաւունքների անժխտելի ոտնահարումները, ինչպիսիք են Յայոց Ցեղասպանութեան մերժումը, Յայաստանի դէմ շարունակուող շրջափակումը եւ Թուրքիայում ազատ արտայայտուելու բացարձակ արգելումը, այնպիսի հարցեր են, որոնք պէտք է բացայայտուեն նման,- այսպէս ասած,- «տարեդարձների» ժամանակ», - նշել է Վաչէ Թովմասեանը, ընդգծելով, որ Յայ Երիտասարդաց Դաշնակցութիւնը իբրեւ Յայ Դատի արթուն պահակն ու դրօշակակիրը չի կարող լուռ մնալ եւ իր բողոքի ու պահանջատիրութեան ձայնը չբարձրացնել թուրքական անդրադարձութիւնների դէմ:

Այս լուրերը տրամադրուել են
ՅԵԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Յանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations@ARF1890.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրուել են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: